



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՅ. 1. ՍԵՄՅՈՒՆՈՎ

Ա. Մ. Ա. Ն Ո Ր

 մանորի (նոր տարվա) պաղա-
փարը սերտորեն կապված է
օրացուցիչ հետ, իսկ վերջինս
կախում ունի օգտագործվող
տոմարական սիստեմից:

Այն օրացուցյները, որոնցից մենք ներկա-
յում օգտվում ենք, ունեն երկար պատմու-
թյուն: Բազմաթիվ գիտնականների աշխա-
տանքների շնորհիվ մենք հնարավորություն
ենք ստացել այսօր, առանց որևէ դժվարու-
թյան օգուլելու պատի կամ սեղանի օրա-
ցուցիչ: Օրեցօր հերթականությամբ պոկե-
լով օրացուցիչ թերթիկները, մենք վերջ ի
վերջո հասնում ենք վերջին թերթիկին և ար-
դեն ստիպված ենք լինում գնել նորը, որի
հենց առաջին թերթիկի վրա զրված է լինում
«նոր տարի»— ամանոր, որն այժմ համար-
վում է հունվարի 1-ը:

Ինչո՞ւ է անպատճառ հունվարի 1-ից սկսվում նոր տարին, գիտականորեն որքանո՞վ
է միշտ այդ մոտեցումը և ինչո՞վ է պայմա-
նավորված այն:

Գիտական տեսակետից ենիելով, մենք կա-
րող ենք տարվա ցանկացած օրն անվանել
ամանոր և դրանից սկսել նոր տարին և ոչ
մի սխալ գործած չենք լինի:

Մարդկության զարգացման պատմությու-
նը ցուց է տալիս, որ բոլոր հասարակու-
թյունների պայմաններում խիստ անհրա-
ժեշտ է եղել հաշվի առնել ժամանակը,
գիտակցորեն օգտագործել այն: Տնտեսա-
կան և կուտուրական կյանքի զարգացման
աստիճանի հետ կապված լինելով ժամանա-
կի հաշվման եղանակը կարող է լինել շատ
պարզ կամ բարդ (երկու դեպքում էլ գի-
տականորեն հիմնավորված):

Ամենաառաջին շրջանում, երբ մարդ գրտ-
նըլում էր վայրենի վիճակում և իր մնունքը
ձեռք էր բերում նախնական որսորդությամբ,
մարդուն պետք էլ չ'էր կատարելագործված
օրացուց: Նա բավականանում էր օրը բա-
ժանակով մի քանի մասի՝ առավոտ, կեսօր,
երեկո և գիշեր: Այդ շրջանում բոլորովին էլ
չարկ չկար որոշելու նոր տարվա օրը:

Հետոքնետե, երբ մարդկային հասարակու-
թյունը զարգանում է և արդեն առաջանում
են ցեղեր, բարդանում են և տնտեսական
պայմանները, առաջ է գալիս պահանջ՝ ընտ-
րելու ժամանակի ավելի մեծ միավոր: Ժա-
մանակի այդպիսի միավոր մարդկությանը
արամագրում է հենց ինքը բնությունը, այն
է՝ լուսնի փուլերը: Մի շաբթ տարիների փոր-
ձը այդ ժամանակի մարդկային հասարա-
կությանը համոզում է, որ լուսնի փուլը
կանոնավոր կերպով կրկնվում են: Քանի որ
լուսնի փուլերի կրկնվելը, այսպես կոչված
լուսնի սինուուիական ամսվա տեղությու-
նը հավասար է 29,5306... միջին օրվա, իսկ
այդ թիվը, բացի նրանից, որ պարբերական
կոտորակ է և ուստի անհամաշավելի է մի-
ջին օրվա հետ, այն ժամանակված մարդկու-
թյան համար մեծ արժեք էր ներկայացնում:
Հետեւանը լինում է այն, որ լուսնային ա-
մսը բաժանվում է բնականորեն 4 մասի. ա)
նորալուսնից մինչև լուսնի ասացին քառորդը
(երբ լուսավորված է լինում լուսնի կեսը),
որը տեսում է մոտ 7 օր և մի քիչ ավելի (շրո-
ւանանք էպոսան), բ) առաջին քառորդից
մինչև լիալուսինը՝ դարձալ 7 օրից մի քիչ
ավելի, գ) լիալուսինց մինչև լուսնի վերջին
(երրորդ քառորդը), նույն տեղությամբ և
դ) վերջին քառորդից մինչև նորալուսինը, էլի
մոտ 7 օր...: Այստեղից առաջանում է ժա-

մանակի միջանկյալ միավոր, այսպես կոչված շաբաթը, որը բաղկացած է 7 օրից և որն օրացուցում պահպանվել է մինչև մեր օրերը: Հետագայում, երբ զարգանում է աստղաբաշխությունը, արևմտյան ժողովուրդների կողմից շաբաթվա օրերին տըրվում են արեգակի, լուսնի և հոնում հայտնի հինգ մոլորակների անունները, իսկ արեկելյան ժողովուրդները պահպանում են նրանց անունները համարյա թե հերթական կարգով. օրինակ՝ հայկականում՝ միաշաբաթ (հետագայում՝ կյուրակի), երկուշաբաթ և այլն, վրացականում՝ էրշաբաթի (կիրա), օրշաբաթի և այլն: Նույնու դիտվում է և ուսականում շաբաթվա անունների նկատմամբ:

Թե որքան երկար էր համարվում լուսնի ամսվա տեսողությունը, վկայում է այն փաստը, որ հոնում լուսնի ամիս ասած գաղափարը համարժեք էր համարվում «մեկ տարվա» գաղափարին և մարդկանց տարիքը հաշվում էին լուսնի ամիսներով: Դրանով պիտի բացատրել Ս. Գրքում բերված տվյալներն այն մասին, որ այսինչ նահապետն ապրել է 969 տարի, այլ կերպ ասած՝ 969 լուսնակին ամիս կամ մեր այժմյան հաշվով՝ մոտ 70—72 տարի: Ինչպես տեսնում ենք, 70—72 տարին այնքան էլ մեծ սարիք չէ և շատ ու շատ սիմառ է այն կարծիքը, որ հնում մարդկա եղել են «երկարակյաց»: Այդ հաշվով մեր ժամանակվա 57 տարեկան ժարդը ըստ նրանց հաշվի կլիներ 705 տարեկան, իսկ 68 տարեկանը՝ 940 տարեկան, քանի որ մեր 19 տարիների տեսողությունը հավասար է 235 լուսնային ամիսների տեսողության:

Այդ մասին շատ գեղեցիկ է արտահայտվում 7-րդ դարի մաթեմատիկոս և աստղաբաշխ Աննահա Շիրակացին (տես «Տիեզերագրություն և տոմար», Հայպետհրատ, 1941 թ., Է ԽԲ). «Տեսանելով գառաջնոցն զլուածն լցեալ և մաշեալ, իմացան զանցաւորութիւն կենաց իւրեանց և ասացին թէ՝ «մետ է պատկեր»:

Անցնում են դարեր, հազարամյակներ, փոխվում են մարդկային հասարակության տնտեսական պայմանները, սկիզբ է դրվում նատակյաց կրանքի, նախնական հողագործության: Այդ պայմաններում փոխվում է նաև օրացուցի նկատմամբ մեջած պահանջը: Այժմ արդեն մարդուն պետք էր այսպիսի օրացուց, որն ակզրում մոտավորապես, իսկ հետագայում ավելի մեծ ճշտությամբ կարողանար ցուց տալ տարվա եղանակների սկիզբն ու վերջը: Եթե որսորդությունը որոշ կապականության մեջ կարագի անդամների մեջ է ունենում գարեանալին զիշտական օրը, երբ արթնանում է բնությունը, գարնան սկիզբում: Դրա հետեւը պահպանվել են մինչև այսօր մի քանի արեւլյան ժողովուրդների մոտ, որոնք իրենց նոր տարվա օրը մեծ շքեղությունում տարվա եղանակը կատարում են հինգ

կան շրջանում տարվա եղանակների դիտումները. մարդկանց բերում են այն եղրակացության, որ 12 լուսնային ամիսներից հետո տարվա եղանակներն սկսում են կրկնը-վել, և ահա առաջանում է ամենանախնական օրացուցը, որի տարվա տեսողությունը հավասար է լինում 12 լուսնային ամիսների տեսողությանը, այսինքն՝ 29,5306... $\times 12 = 354,3672$ միջին օրվա: Սակայն տարվա իսկական տեսողությունը (այսպես կոչված տրոպիկական) հավասար է 365,2422... միջին օրվա կամ 365 օր, 5 ժամ 48 րոպե, 46 վայրկյանի, ուրեմն, այդ օրացուցով նշվող տարին մոտ 11 միջին օրով կարծ էր իսկական տարուց, ուստի անհրաժեշտ էր ուղղել այն բացը, որը և կատարվեց: Սակայն այժմ էլ աստղաբաշխության զարգացման բարձր աստիճանի պայմաններում, իրանում գործածության մեջ է գեռևս այդ հին, պուտանային կոչվող օրացուցը:

Ժողովուրդների տնտեսական և կուպուրական զարգացումն իր հետ բերեց նաև սամանակի հաշվման եղանակի կատարելագործում: Պահանջ դրվեց պահպանելով լուսային ամիսը որպես միավոր, կազմելու այնպիսի մի օրացուցային սիստեմ, որ տարվա եղանակների սկիզբն որոշեր մեծ ճշտությամբ: Այդ ուղղությամբ հսկայական աշխատանք են կատարում բաբելոնական աստղաբաշխները: Նրանք ստեղծում են օրացուցային թեև բարդ (նահանջ և սովորական իրար անհավասար տարիներով) սիստեմ՝ սովորական (այսինքն 12-ամսյա) և նահանջ (13-ամսյա) տարիների համախմբվածությամբ, բայց որը հնարավորություն էր տալիս, որ ա) յուրաքանչյուր ամավա ակիզը համենիներ նորաւունի հետ, բ) վերցրած ժամանակաշրջանում (19-ամյա կամ 30-ամյա) մեկ տարվա միջին տեսողությունը մոտավորական համարժեք դպանար տրոպիկական տարվա տեսողությունը: Այդ բարեկունական, կամ ինչպես անվանում են լուսնա-արեգակնային տոմարն ընդունվում էր գեռ 3-րդ հազարամյակում մեր թվակրությունից առաջ համարյա թե բոլոր արևելյան ժողովուրդների կողմից: Առանց որևէ փոփոխության այդ պահպանվել է երրարեցիների տամարտ, որոնք ընդուրինակել են բարեկացիներից նրանց տոմարը, երբ նարուգորդնուուրի ժամանակ գերված էին Բաբելոնուամ: Այդ տիպի տոմարտ նոր տարվա օրը միջատ տեղի է ունենում գարեանալին զիշտական սարի օրը, երբ արթնանում է բնությունը, գարնան սկիզբում: Դրա հետեւը պահպանվել են մինչև այսօր մի քանի արեւլյան ժողովուրդների մոտ, որոնք իրենց նոր տարվա կամ շքեղությամբ կատարում են հինգ

գարնանային գիշերահավասարի օրը (օրինակ՝ «Նովմբերի բայրամ»...):

Թեև Անանիա Շիրակացու ժամանակ ժողովուրդներից համարյա թե ոչ մեկը չէր օգտվում լուսային տիպի նախնական օրացուցով, բայց և այնպես այդ հնության աղղեցության շնորհիվ նա վերոհիշյալ Տեթ-ում դրում է.

«Անուանք ամսոցն ո՛չ էին լիսկզրանէ: Այլ՝ սկսեալ յԱդամայ մինչև ի Մովսէս, զգարնանամուսն տարեմուս անուանէին ամենայն ազգք: Եւ ամսոց անուանք ոչ դոյր, բայց միայն զառաջինն լուաինն զգարնան առաջին լուաին անուանէին, և զինի՝ երկրորդ լուաին, և երրորդ, և շորորդ, մինչև երկուտասաներորդն և զողոյն ամեն՝ այսպիսի անուամբ վարէին մինչև ի մուսն գարնանային....» (Նույն գլխի շարունակությունը տալիս ենք, բայց իմաստի բացարձությունը տես ներքում):

«Բայց զամիսք հայոց ասացից, զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զինել թուականին Հայոց էին: Եւ ո՛չ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն Բանին Աստուծոյ՝ անուանեալ էին ամիսքդ այգորիկ. և այս է պատճառն: Զի Հայկ ուն անուն աղեղնաւոր հակայ՝ յազգի Յարեթի որդու նոյի, եկեալ ի Բարելոնէ՝ տիրեաց Հայոց: Եւ բնակեալ ի Հայոց, և յանոն նորա կոչեցան Հայք, նոյնպէս որդոց և դատերաց իւրոց եղ անուանս. զոր առեալ Հայոց զանուանս ուստերաց և դատերաց նորա եղին ի վերայ ամսոցդ՝ վասն մեծարանաց հօրն և զաւակացն. և են այսորիկ նաւասարդ, Հոռի, Սահմի, և Մեհեկի, Արեկ և Մարերի դատերք էին Հայկին: Տրէ, Քաղոց, Արաց և Հրոտից որդիք էին Հայկին: Խոկ Մարգաց և Հարաւանց, զոր այժմ Աշկի կոչեն, այսէ ի գործոց անուանեցան, զի ընդ այն ժամանակս ամառնայինք էին սոքաւ¹:

Միևնույն ժամանակաշրջանում (3-րդ հազարամյակը մ. թ. ա.) Նեղոս գետի հովտում (Եգիպտոսում) առաջ է գալիս մի ուրիշ, շատ ինքնուրուց տոմարական սիստեմ, որտեղ լուաինը ոչ մի գեր չի խաղում: Դա այսպես կոչված արեգակնային տիպի օրացուցն է: Ինչպես Հայտնի է, Նեղոս գետի հովտի պտղաբերությունը և ամբողջ տնտեսական կյանքը կախում է ոմեցեկ Նեղոս գետի հորդումներից՝ երբ որոշ ամիսների ընթացքում այդ գետի ջուրը բարձրանալով

1. Մեր աշխատությունում՝ «Հայկական տոմար», մենք ապացուել ենք, որ Հայկական հին շարժական տոմարում ապակատասապի տարվա համար այդ ամիսները պիտի լինեն «գարնանային»: Այստեղ արտագրող գրի սիստեմ պիտի համարեն

դուրս է գալիս ափերից և հեղեղում ամբողջ երկիրը: Մի քանի ամիս ջուրը բարձր մակարդակի վրա մնալուց հետո, կամաց-կամաց սկսում է իշնել, թողնելով հովտի վրա տիղմի հարուստ շերտ, որով և պայմանավորված է այդ երկրի բնոքատվությունը: Հասկանալի է, որ Եգիպտացիներին պետք է հատաքրքրեն Նեղոս գետի ջրերի բարձրանալու և իշնելու ժամկետները, քանի որ դրանից էր կախված հողագործական աշխատանքների կանոնավորման հարցը սկզբում, երբ դեռ կառուցված չէին հսկայական ջրաբաշխան սիստեմներ և ջրամբարներ: Այդ շրջանում գիտությունը գտնվում էր բուրմերի ձեռքում և կենուրունացված էր տաճարներում: Քուրմերի դիտումները հանգեցրին այն եղրակացության, թե Նեղոս գետի հորդումը սկսվում է այն ժամանակ, երբ երկնակամարի ամենափայլուն և պայծառ աստղ Սիրիուսը (Եգիպտական Սոտիսը) առաջին անգամ դիտվում է առավայական արևածագից թիւ առաջ: Սոտիս աստղի դիտումներից հանդեպ տարբեր եղրակացություններ, տարվա տևողությունը հավասարեցնելով 1. շատ հին դարերում՝ 360 օրվա, 2. հետագայում՝ 365 օրվա (3-րդ հազարամյակ մ. թ. ա.) և 3. վերջերում՝ (2-րդ հազարամյակ մ. թ. ա.) 365,25 օրվա: Իրենց տոմարը կազմելիս Եգիպտացիները տարվա տևողությունը հավասար էին համարում 365 օրվա, այլ կերպ ասած՝ նրանց տարին մոտ 0,25 օրույն ավելի կարճ է իսկական տարվա տևողությունից և հետևապես՝ 4 տարում տալիս էր մեկ օրվա տարբերություն: Այդ հաշվումները պահպանվել են և մեր ժամանակակից օրացուցում, որի պատճառով էլ մենք այժմ լուրան լուր 4-րդ տարվա (նահանջ տարի) փետրվար ամսում ավելացնում ենք մի օրվերականինելով ժամանակի հաշիվը: Սակայն Եգիպտական քուրմերը քաջ գիտենալով իրենց տոմարում գոյություն ունեցող այդ սիստեմը ժամանակին չէին ուզզում այն, այլ սպասում էին, որ 1.460 տարուց (4տ. $\times 365 = 1.460$ տ.) հետո սիստեմ կուտակվելով կազմի մի ամբողջ տարի, որը և (այսինքն 1.461-րդ տարին) համարում էին նահանջ տարի (Հայկականում «նահանջից նահանջ» տարի): Այդ ամբողջ տարին հերթական համար չէր ունենում: Մյուս տարվանից նրանք սկսում էին արդեն նոր 1.460-ամյա այսպես կոչված «սոտիսական ժամանակաշրջանը» (Հայկական «Հայկյան շրջան»):

Այդ տոմարական սիստեմը շատ հետաքրքրական էր. տարին բաժանվում էր 13 ամսվա, որոնցից 12-ը հավասար էին և բարկացած յուրաքանչյուրը 30 օրվանից, իսկ 13-րդ ամսին ուներ միայն 5 օր: Այդ

տոմարում շաբաթվա գաղափարը հայտնի էր, ամիսը բաժանված էր սովորաբար 3 տասնօրյակի (գեկաղա) կամ 6 հնդօրյակի (պենտադա). Այդ տոմարում ամանորը հաստատում չէր. շորս տարին մեկ օրով հետ էր մնում: Եթե, օրինակի համար, 1952 թվականին ամանորը տեղի ունենար հունվարի 1-ին, ապա 1956 թվականին նա կինը դեկտեմբերի 31-ին, 1960 թվականին՝ դեկտեմբերի 30-ին և այն: Հետևաբար՝ ամանորը շարժական էր և կարող էր 1460 տարվա ժամանակաշրջանում պարբերաբար հերթական կերպով համբնելու տարվա ըուլոր օրերի հետ և միայն 1461-րդ տարում վերադառնալ նախկին սկզբնական տեղը: Նման տոմարը գիտության մեջ անվանվել է «շարժական տոմար» կամ «թափառական ամանոր ունեցող տոմար»:

5-րդ դարում մ. թ. ա. վրացիները, հայերը, իրանցիները, աղվանները և Առաջավոր Ասիայի համարյա թե բոլոր ժողովորդները (բացի բարեկանացիներից և երրայեցիներից) քաղաքական և պատմական որոշ հանդամանքների պատճառով վերափոխում են իրենց երկրներում գործող սոմարները, գործածության մեջ մտցնելով եգիպտական տիպի հաշվման եղանակները՝ ոչ թե կուրորեն, այլ որոշ ուղղումներով, հիմնականում պահպանելով միայն նրա կառուցվածքը: Օրինակ, եթե եգիպտականի վերջին ապակատաստագի տարին տեղի ունեցավ 139 մ. թ., հայկականում՝ 428-րդ թվ. մ. թ., եթե եգիպտականում աստղաբաշխական տեսակիտից գլուխուր դեր պատկանում էր Սիրիոսի (Սոտիսի) հելիակտիկ ծագմանը, Հայկականում՝ այդ դերը պատկանում էր Հայկի (Օրիոնի) համաստեղությանը: Որոշ փոփոխություններ մտցրել էին և իրանցիք. առաջինն այն էր, որ նրանց կրոնական օրացույցում պահպանվել էր որպես ամանոր գարնային գիշերահավասարի օրը, երկրորդը՝ որ նրանք ժամանակի սիրալն ուղղում էին ոչ թե 1.460 տարուց հետո, այլ յուրաքանչյուր 120 տարուց հետո մտցնելով մի նահանջ ամիս: Նույնպես էլ վարկեցին և մնացած բոլոր ժողովորդները: Անձնահա Շիրակացուց ամիսների ամունների մասին վերը կատարված մեջքերումներն հենց վերաբերում են Հայկական այս տիպի տոմարին: Վերոհիշյալ բոլոր ժողովորդներից միայն հայերն էին, որոնք անփոփոխ պահպանեցին իրենց այսպես կոչված հին տոմարը, սկսած 460 թվականից մ. թ. ա. մինչև 1317 թվականը մ. թ. հ.: Այդ ժամանակ արդեն զարգացող կապերը արմետյան ելքովայի հետ, երկրի քայլարված վիճակը և այն, որ այդ թվականի (1317 թ.) հայկական շարժական տոմարի ամանորը համբնենում էր հունվարի

1-ի հետ, գրգեցին հայ ժողովորդին էլ հրաժարվել իրենց հին տոմարից և անցնել Հույյան տոմարին: Այդ տոմարին հետևում էին նաև երկու այլ ժողովուրդներ՝ զպտիներն ու հաբերշները:

Ինչպես կեզրակացնի ինքն ընթերցողը, Հույյիս Կեսարին՝ տոմարն ուղղելիս համարյա թե ոչինչ չէր մնում կատարելու: Նրա կողմից եգիպտոսից հրավիրված աստղաբարձի Սողիկենը միայն մի փոփոխություն մտցրեց՝ առաջարկելով շորս տարուց չորս րորդը համարել նահանջ տարի (փոխարին իրանականի՝ 120 տարուց հետո մտցնել մեկ նահանջ ամիս ու հայկական-եգիպտականի՝ 1.460 տարուց հետո մտցնել մի նահանջ տարի): Այլ կերպ ասած՝ Սողիկենը աշխատեց կանելու առաջացող սխալ ավելի կարեծանակամիջոցում: Այդ բանը վաղուց կարուուր էին կատարել և իրենք եգիպտացիք, իթի վիներ քուրմերի պահպանողականությունը: Հայտնի է, որ առաջին անգամ այդ փոփոխությունն առաջարկել է հենց եգիպտոսի փարավոն Սալիտիսը (որը հյուգոս էր): Այդ փաստը հիշատակված է Պղատոնի «Թիմեսին» աշխատության լուսանցքների ծանոթագրություններում: Հետագայում Պրոդրուեսուան հարստության ժամանակ նույնն առաջարկում է և Պոլոնմեռու թագավորը, որի հրամանն արձանագրված է այսպես կոչված «Կանոպի հրամանգրում» 238 թվականին մ. թ. ա. մարտի 7-ին: Նրանց ամանորը մնաց շարժական երկար դարերի ընթացքում: Հետագայում Օգոստոս կայսրի հրամանով նրանց ամանորն ամրացվեց օգոստոս ամսի 29-ի վրա՝ կառավարական օրդանների համար: Սակայն բուն եգիպտական ժողովուրդը, ինչպես և հարեւան հարեւները մինչև այսօր էլ պահպանում են հին Հաշիմիր: 1928 թվականին Աղեքանդրիայի պատրիարքը ևս ընդունեց նոր տոմարը (Գրիգորյան), բայց բնիկ ժողովուրդը շարունակում է հաշիմիր պահել 5—6 հագար տարի գործածության մեջ գտնվող եգիպտական տոմարի սիստեմով, միայն այն տարբերությամբ, որ նրանք զարագլուխը շեն հաշվում Քրիստոսի ծննդից, այլ հումեական Դիոնիսոսի կայսրի թագավորության օրից, այն է՝ 284 թվականի օգոստոսի 29-ից: Այժմ նրանց ամանորը տեղի է ունենում սեպտեմբերը ամսվա մոտավորապես կեսին (այդ բարդ հաշիմիները շենք բերում հոդվածը շանրագրաներու համար):

Հին տոմարներից ամենավատ կառուցված և մեծ սիստեմներ պարունակողն էր հոսմեական տոմարը: Նա այնքան վատ էր, որ ձըման տեսները կատարում էին ամառը, աշնանայինը՝ գարնանը: Բացի դրանից, օրա-

յուլցի հարցն ամբողջությամբ գտնվում էր բուրմերի ձեռքում: Գլխավոր քուրմը (protincephalus maximus) և նրա օգնականները՝ օրացուցը զարձրել էին ժողովրդի շահագործման դեմք: Ըստ Կրկերոնի, քուրմերն օգտվելով իրենց իշխանությունից, երկարացնում էին ընտրված պաշտոնյաների ժամկետները, ինչ այդ պաշտոնյաներն իրենց բարեկամներն էին, կամ կաշառել էին քուրմերին: Ըստ սովորության, Հոռմի ենթակա հսկայական հարուստ նահանգները փոխ-հյուպատոսներ էին ուղարկվում մեկ տարվա ժամկետում ժամկետու ժամկետու երկարացնուն այս գեպում մեծ նշանակություն ուներ, քանի որ դրանով երկարաձգվում էին հարկերի հավաքման և փոխ-հյուպատոսներին ու քուրմերին անձնական մեծ շահեր բերող զանազան այլ պարտականությունների կատարման ժամկետու ժամկետու: Բացի ժամասաների շահագործումից, օրացուցի ինառնաշփոթությունը այնպիսի մեծ քարտացնում ու տարրալուծում էր առաջացնում ժողովրդի կյանքում, որ Հոռվիոս Կեսարի ժամանակ օրացուցի կարգի բերելը դարձել էր ամենակարևոր հարցերից մեջը: Զպիտք է կարծել, թե Հոռվիոս Կեսարն օրացուցի բարեփոխություններու նպատակ է ունեցել օֆանդակել ժողովրդին: Փաստորեն երկրի բազաքական կյանքի կարգավորումն է ստիպել նրան՝ դիմել այդ բարեփոխությանը: Սխալն արդեն հասել էր այն շափին, որ 46 թվականին մ.թ.ա., օրացուցի կարգի բերելու տարրվա տևողությունը ստիպված եղան ընդունել հալվասար 445 օրվա, և այդ տարին, իրավամբ, անվանվեց «խառնակ տարի» (appius confusio): Այդ բարեփոխությունը հաջողվեց կատարել Հոռվիոս Կեսարին միայն այն պատճառով, որ նա միաժամանակ վարում էր գլխավոր քրմապետի պաշտոնը: Բայց և այնպես Հոռվիոս Կեսարը, որը քաջ ծանօթ էր թե՛ հավասար ամիսներ ունեցող եղիտուական կատարելագործված տոմարին և թե՛ աստղաբաշխական ընդհանուր հարցերին, մինչև վերջ շկարադրության տանել բարեփոխությունը: Նրա օրացուցում պահպանվեցին իրար ոչ հավասար ամիսները, հունվարի 1-ը, որպես նոր տարվա օր (ամանոր), որի տոնելու սովորությունը հոռմայեցիներն ընդունել էին գիռ 153 թվականին մ.թ.ա., քանի որ այդ օրվանից էր սկսում նրանց տնտեսական և վարչական տարին, երբ աշխատանքի էին անցնում նոր ընտրված հյուպատոսներն ու այլ ընտրովի պաշտոնյաները: Ահա այդ օրացուցը իր ամա-

նորով (հունվարի 1-ին)² և տարօրինակ ամիսներով մեղ ժառանգություն է մնացել հոռմայեցիներից, գործածության մեջ է մինչև այսօր, թեև այն ամենաանհաջողն է մինչև այժմ եղած բոլոր տոմարական սիստեմներից: Այսպիսով մենք տեսնում ենք, որ նոր տարվա օրը (ամանորը) տարբեր շրջաններում և տարբեր ժողովուրդների մոտ կատարվել է տարվա զանազան օրերին, դրանից ոչինչ չի փոփոխվել և չէր էլ կարող փոփոխվել, որովհետև դա նոր տարին մկնելու միայն պահմանական օր է:

Այդ տեսակետից շատ հետաքրքրական է փրանսիական ուկուցիոն օրացուցը: Իրապես, 1793 թվականին հրատարակված ֆրանսիական ուսապուրիկայի օրացուցը ըստ ձևի և ըստ բովանդակության արտակարգ խնդրություն էր և զիսական տեսակետից ձիգու կազմված: Հնից պահպանվել էր միմիայն տարվա բաժանումը 12 ամիսների:

Նրա կառուցվածքն այսպիսին էր: Նոր տարվա օրը հունվարի 1-ից տեղափոխվում է սեպտեմբերի 22-ը, 1792 թվականին այդ օրը լուս էր ընծայվել հրամանագիր ֆրանսիայում արքայական իշխանության լուծարքի մասին: Հրամանագրի հրատարակման օրը պատահարար համբնկել էր աշնանային գիշերահավասարի օրվա հետ: Ըստ այս օրացուցի՝ տարին բաժանվում է 12 ամիս, յուրաքանչյուրը 30 օրից բաղկացած: Տարվա վերջին ավելացնում են 5 լրացուցիչ օր սովորական տարում և 6 օր՝ նահանջ տարում: Տարվա սկիզբը որոշվում էր գիտական ձիշտ հաշվումներով, վերացվում էին տոմարական նախկին սիստեմներում նկատված սխալները: Օրացուցից դուրս էր հանված շաբաթվա զաղափարը, յուրաքանչյուր ամիս բաժանվում էր 3 գեկաղայի (տասանօրյակի): Փոփոխված էին շաբաթվա օրվա անոմները, գեկաղայի օրերը համարվում էին 1-ին, 2-րդ, 3-րդ... 10-րդ (հանգըստի օր) թվանշաններով:

Հունվարի 1-ը որպես նոր տարվա օր տոնողները վերցված էին կասկածի տակ, որպես հին կարգերի հետեւղներ և պահնողներ: Նահանջ տարիների մտցնելը որոշ օրենքով շեր կատարվում, ինչպես նախատեսնված էր Հոռվան տոմարով, այլ կարող էր պատահել, որ նա տեղի ունենա ոչ թե չորրորդ տարում, այլ հինգերորդում: Դրա-

2. Մենք այսուղ շենք խոսում այսպես կոչված անոր տոմարի մասին, քանի որ նրա նպատակն է եղել ոչ թե տոմարի կատարյալ կանոնավորությունը, այլ չին տոմարի (Հոռվան) աշխաթող արված բովեների և վայրկանների սխալի ուղղումն, որը 20-րդ դարում հասել էր 13 օրվա:

նով ապահովված էր տրոպիկական տարվա տևողության արժեքը:

Քրիստոնեալության հետ միասին թյուզանդիալից Ռուսաստան մուտք գործեց նաև Հովհաննեալ տոմարը, սակայն մինչև 15-րդ դարի վերջը տարին սկսում էին մարտի 1-ից. ալդ օրը համարվում էր ամանոր:

15-րդ դարավերջից մինչև 1700 թվականը Մուկովյան թագավորությունում տարին արդեն սկսում էր սեպտեմբերի 1-ից, Միայն Պետրոս I-ը 1700 թվականից կարգողբեց տարեսկիզբը համարել հունվարի 1-ից:

Այսպիսով տեսնում ենք, որ շատ հնուց տարբեր ժողովուրդներ տարվա սկիզբը (ամանորը) համարում են 1) կամ գարնան գիշերահավասարի օրը, 2) կամ գարնան սկիզբ համարելով, մարտի 1-ը, 3) կամ աշնանը, սեպտեմբերի 1-ից, կեսից կամ էլ աշնանային գիշերահավասարի օրը, 4) կամ հունվարի 1-ից և 5) կամ շարժական տոմարում, փոփոխական ամանորով, որը կարող էր տեղի ունենալ տարվա որևէ օրին:

Հետևապես, միանգամայն ճիշտ է այն միտքը, թե ըստ ցանկության տարվա օրերից յուրաքանչյուրը պայմանականորեն կարելի է համարել որպես նոր տարվա օր (ամանոր) և դրանից կյանքում ոչ մի փոփոխություն տեղի չի ունենա:

Հնում եղածներից իմաստ ունեցող պիտի

համարել այն ամանորը, որը համընկնում էր գարնանային գիշերահավասարի հետ, երբ, մեր հյուախային կիսագնդում, սկսում էր արթնանալ բնությունը, սկսում էր գարունը և դրա հետ միասին՝ դաշտային աշխատանքները: Դա իրոք մի գեղեցիկ գարնանային տոն էր հմաստավորված է նաև այն ամանորը, որը համընկնում էր աշնանային գիշերահավասարի հետ, երբ արդեն մարդկությունը ավարտել էր դաշտային աշխատանքները և հավաքել իր աշխատանքի բերքը (բերքի տոն):

Ինչպես տեսնում ենք, հունվարի 1-ը ոչընչով աշքի ընկնող օր չէ, եթե ժամանակին նա արժեք է ունեցել հոռմայեցիների համար, այսօր մեզ համար նա արժեք չունի:

Պարզ է, որ հարցին շատ ավելի խելացի մտեցան ֆրանսիական ուսուպուրլիկական օրգանները և գիտնականները, երբ նոր տարվա օրը նշանակեցին այն օրը, երբ ֆրանսիական ժողովուրդը համարում էր իրեն ազատագրված արքայական կառավարությունից և արքաներից: Բայց, դժբախտաբար, այդ ամանորը գործ ածվեց շատ կարճ ժամանակ, քանի որ նապոլեոնը հետագիմական շրջանների հետ միասին դավաճանեց ֆրանսիական ժողովուրդին: Հետաքրքրականն այն է, որ Փարիզի կոմունայի ժամանակ այդ տոմարը նորից վերականգնվեց, սակայն շատ կարճ ժամանակով:

